

ՊԱՅՄԱՆՆԵՐ


ՊՈՒԼԿԱՐԻԱ.
Տարեկան 8 ծր.
Վեցամսեայ 4 ծր.

ԱՐՏԱՍՈՒՇՄԱՆ
Տարեկան 10 ծր.
Վեցամսեայ 5 ծր.

ԱՄԵՐԻԿԱ.
Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԵՐԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔՍԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkèrian Michitaris
tengasce № 4 Vienne

ՀԱՍՏ
Édaction du Journal
„Ira von k“
Varna

Редакция на
Вѣстникъ
„Ирaвункъ“
Варна

Իրոշքիւնք եւ չեմ
տրոշիր

ՕՐԵՆՔԻ ՍԸ ՊԵՏՔԸ

ԱՒԱՐԱՌՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ

Օսմ. Երեսփ. Ժողովը այս օրերս կ'ըզադի պատժական օրինագրի քննութեամբ երկրի մը մէջ անհատական ու հանրային կեանքի, ինչքի ու պատւոյ անբընաբար խուժանքները ապահովող ու երաշխաւորող գլխաւոր ազդակն է պատժական օրէնքը: Այն պէտք է կանխատեսէ նաեւ այն ամէն հաւանականութիւնները որոնք կրնան ոճիր մը կամ ոճիրներու շարք մը ծնիր շեղանարար օրէնադիր մարմիններու անդամները, այսինքն սահմանադրական երկրի մը—որպիսին է այժմու թուրքիան—երեսփոխանները և ծերակուտականները երկրին և մասնաւորապէս իրենց պատկանած համայնքին ապահովութիւնը ու անդարձութիւնը երաշխաւորելու համար սիջողներ խորհելու և առաջարկներ ներկայացնելու են. իրենց գլխաւոր և էական պարտականութիւնը այդ է:

Յայտնի է թէ սա քաններորդ տարու մէջ իսկ ամէն երկրէ աւելի թուրքիան աւարառութիւններու և մարտաշարական կոտորածներու երկիրն է: Սահմանադրական ռէժիմը իր եռամեայ գոյութեամբ չը կրցաւ ցարդ աւարառութեան և կոտորածի սարսափէն ու արհաւիրքէն փրկել խաղաղասէր տարրերը, մասնաւորապէս Անատոլիոյ քրիստոնեաները, որոնք ընդհանրապէս արիւնկալ և չիպացած իսլամ ցեղերու մէջ ապրելով, միշտ կողոպտուելու և ջարդուելու սրտադողէն զերծ չեն. վասնզի կը տեսնեն թէ կառավարական ստորագրած պաշտօնեայի մը մէկ ակնարկը կամ մոլեռանդ շէյխի մը ու փաթթոցաւորի մը գրգռիչ զոյգ մը խօսքը բաւական է յարձակման մը շնորհիւ իսլամ խուժանը, որ զինեալ պատրաստ է և կ'սպասէ առիթի մը աւարով ու կողոպուտով լեցը. նեւ իր յունը ու քսակը վստահ ըլլալով թէ կողոպտած իր քովը կը մնայ ինչպէս եղած է մինչև

ցարդ: Աւարի ու կողոպուտի և անոր անխուսափելի հետեանքը եղող ջարդի դուրսիւնը Ասիական թուրքիայէ չպիտի վերնայ՝ ցորչափ աւարառութեանց դէմ ապահովող օրէնք մը չը գծուի ու գործադրութեան չդրուի: Պէտք է ի նկատի ունենալ թէ մինչև ցարդ կատարուած բոլոր ջարդերուն մասնակցող իսլամ խուժանին կէտ նպատակին եղած է ոչ թէ ջարդելը այլ կողոպտելը:

Օրէնք մը պէտք է որ տրամադրէ, թէ՛ աւարառութիւն մը կամ կողոպտող մը կատարուած պարագային, քննուի իր ու իր հատուցում ըլլայ մասնակցողներու պատկանած ամբողջ համայնքին կամ գիւղին կողմէ, և ամբողջ գիւղը պատասխանատու բռնուի իր մէկ քանի համագիւղացիներէ գործուած և իր սահմանին մէջ տեղի ունեցած աւարներու ու կողոպտումներու համար: Այս տրամադրութիւններով օժտուած օրէնք մը 80 առ 100 կարող պիտի ըլլայ փրկել երկիրը այսօրու անապահով վիճակէն: Այս փորձը եղած է Ռուսիոյ և Պուլկարիոյ մէջ և սքանչելի արդիւնք տուած է արդէն:

Այս օրինակ օրէնքի մը գոյութիւնը ոչ թէ միայն խաղաղասէր ու աշխատաւոր տարրերուն ապահովութիւն պիտի պարգեւէ, այլ նաեւ աւազակութեամբ, աւարառութեամբ և ոճիրներով սնանող ցեղերն ու խուժաններն ալ պիտի հարկադրէ, պիտի վարժեցընէ աշխատասիրութեան, երկրագործութեան, անասնաբուծութեան և այլն որպէսզի իրենց ապրուստը իրենց ճակատի քրտինքով ճարեն: Ասկէ զատ արիւնկըղակ աւազակներ արտադրող ցեղերը և գիւղերը՝ այդ օրէնքին խիստ տրամադրութեան տակ պիտի ստիպուին իրենց չըջանակին մէջ ապահովութեան հսկողի, զըսպող ոստիկանի և չարագործներուն խրատատուի դերերը կատարել. վասն զի հակառակ պարագային իրենք պիտի ըլլան տուժողը, պատասխանատուն:

Արդ, քանի որ Օսմ. Երեսփոխանական Ժողովը երկրին ապահովութիւնը ձեռք բերելու համար պատժական օրէնքներու ու սուլմասիրութեամբ կը զբաղի, առաւելագէս հայ երեսփոխաններու վրայ պարտք կը ծանրանայ աւարառութեանց դէմ ապահովիչ յօդուածներ առաջարկելու կամ մասնաւոր օրինադիր մը ներկայացնելու Ժողովին: Օրէնք մը որ աւարառութեանց առջեւ առնելէ զատ, ապագայ ջարդերուն ալ առաջը առած պիտի ըլլայ. վասն զի թուրքը, Բիւրսը ու Չէրքէզը երբ համոզուի թէ իր խրաւարը այլևս իր քով չպիտի մնայ, մի միայն մարդ ջարդելու համար այս կամ ժողովուրդի վրայ յարձակում գործել չը պիտի ուզէ: Ժեմ—թիւրք կառավարութիւնը կամ իթթիհատական մեծամասնութիւնը եթէ մի քիչ անկեղծութիւն ունի դէպի արդարութիւնը ու հաւասարութիւնը և եթէ վճռած չէ Անատոլիոյ մէջ հայ ժողովուրդը կոտորածներով ու աւարառութիւններով փճացնել, ուժ պիտի տայ հայ երեսփոխաններէ առաջարկելու լեւրե այդ տեսակ օրէնքի մը ընդունելութեան ու գործադրութեան:

Յ. Պուրպիք

ՔԱՆԴՈՒՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱԿԱՆԱՏԱՆԵՐՈՒ

ՎԿԱՅՈՒՔԻՆԵՐԸ

Ատանայի նահանգին մէջ Հասան Պէյլիի նորակառոյց եկեղեցին քանդուեցաւ է՛ն բարեխիղճ Ժեմ—թիւրքը նկատուած ձէմալ պէյ կուսակալին հրամանով:

Գանդուլ տեղի ունեցած է Մարտ 14-15ին. մինչդէռ Մարտ 11ին Ատլիյէի նախարարը հեռագրած էր նոյն կուսակալին որ յետաձգէ եկեղեցւոյ քանդումը և միայն շինութեան շարունակուածութիւնը դադարեցնէ: ձէմալ պէյ «մինտեր ալթի» ընելով նախարարութեան հեռագիրը, կը փութացնէ քանդումը իսլամ խուժանին:

Ժանին ձեռքով և քանդուելէն յետոյ կը հաղորդէ նախարարական հեռագիրը:

Հասան Պէյլիի նախկին եկեղեցին կրկին ջարդերուն ատեն թուրք խուժանը այրած էր. իսկ նոր եկեղեցին՝ որ աւարտելու վրայ էր տարիէ մը ի վեր կը շինուէր այրիներու և որբերու անձնուէր աշխատութեամբ և 1500 ուկի ծախսելով: Տեղէն ըստացուած թղթակցութիւններ կըսեն. — «Տուները շինուած էին հարկանցի, իսկ եկեղեցւոյ շինութեան սկսելէ առաջ, տեղացիք կատարեցին նախնական օրինական ձեւակերպութիւնները, Դիմեցին Պաշչէի կառավարութեան տեղակալը (գալմագամ) կառավարական պաշտօնեաներով երեք անգամ եկաւ, նայեցաւ եկեղեցւոյ դիրքին, և ամէն տեսակի տող յարմար գտնելով զայն կանոնական մարդաբան ստորագրեց և շինութիւնը արտօնեց, ժողովուրդը ասով ալ չբաւականացաւ, դիմեց Օսմանիէի Միթէսարըքի փաշային, որ նմանապէս անձամբ գալով տեսաւ շինութիւնը եկեղեցիին վայրը և որեւիցէ անյարմարութիւն չի գտնելով, ամենայն գոհունակութեամբ արտօնեց շինութիւնը, Այսչափ օրինական գործողութիւններէն վերջ ժողովուրդը բոլորովին վստահ ու ապահով սկսաւ եկեղեցւոյ շինութեան տարիէ մը ի վեր կը շինէր, ամէն ինչ աւարտած էր գրեթէ և միայն գմբէթը մնացած էր »:

ձէմալ պէյ որ այժմ Պոլիս եկած է, կառարկէ եղբոր թէ մինչ այրած եկեղեցին տափարակ գետնի մը վրայ կը գտնուէր, նորաշէն եկեղեցին գիւղէն բաւական հեռու լեռան մը գագաթը շինուած է որ քաղաքին ամենաբարձր տեղն է և այլն: Այս առարկութեանց հետեւալ պատասխանը կուտայ ականատես մը Բիզանդիոնի միջոցաւ:

«ՊԱՏԱՍԻԱՆ. — Հասան Պէյլիի այրած եկեղեցին բլուրի մը ըստորոտը շինուած էր գիւղին նախաջարկերուն առաջին օրինական վայրը, որ գիւղին ընդարձակելով կեդրոնական դիրք մը գրաւելէ դադարած էր վաղուց, և գիւղին

տնտեսական զոր Պատրիարքարանը ինձ
տուած է մէկուկէս տարիէ ՚ի վեր: Բա-
ւական երկար խօսակցեցանք, արդիւն-
քը այն եղաւ որ, կամ ինքս յանձն
առնեմ դասախօսել առժամաբար, և
կամ (Յակոբեան գոյգէն դատ) միւս
մեթոտաները վերահաստատեմ իրենց
պաշտօնին մէջ՝ մինչև խնդրին վերջ-
նական կարգադրութիւնը իմ պատաս-
խանատուութեան ներքեւ: Եւ ինք մաս
նաւորաբար տեսակցելով էնքան բթե-
րին հետ պիտի յանձնարարէ որ ներո-
գամաութեամբ շարժի: Եկայ աւետե-
լու աղաներուն: Անտարբեր գտնուե-
ցան: Հրաւիրելով Սր «Թաշնանը հա-
ղորդեցի իրեն տեսակցութեանս ար-
դիւնքը: Սա պահանջեց էնքան բթե-
րեման որ արտօնադիր: Յաջորդ օրը
Պր. Կառավարչին մասնաւոր յանձնա-
րարութեամբ դիմեցի էնքան բթե-
րին, որ չընդդիմանալով հանդերձ կառավա-
րիին տեսութեան, խորհուրդ տուաւ
թէ՝ քանի որ խնդիրը բարդ վէճերու
բերմամբ ուր կերպարանք ստացած է,
լուսագոյն է առ ժամանակ մի եւ ըս-
տանձնեմ հայ դասաւանդութիւնը.
և յաջորդ օրն իսկ հոգաբարձուներուն
հետ միասնել ներկայանալով իրեն. ա-
նոնց և իմ ստորագրութեամբ աղեր-
ատական հեռագիր տալու կրթ. նախա-
րարութեան: Ինքն ևս ներքեւ պիտի
յայտնէր իր մասնաւոր հաւանութիւնը
որով գործը նպաստաւոր կարգադրու-
թեան ճամբու մէջ մտած պիտի լինէր:
Անձամբ վաղեցի երկու աղաներու ոտ-
քը, և խնդրեցի որ կործանարբեր էն-
թրիկները մէկգլխով թողնուին ինձ
օգնէմ ինքս իմ անձնական: Խոստանանս Եւ
առաւօտուն առանց ինձ իմաց տալու
երեք-չորս հոգի կը փութան էնքան բթ-
թեօրին մօտ յայտարարելու որ ես առաջ
փոխանորդ չեմ: Իրենց կը հեռագրեն
այն ատեն և էնքան բթեօրը վերապահ
կը մնայ, և ՚ի դարձին՝ կը տարածեն
նորէն իրենց յաւիտենական լանդկը
թէ՝ «այսօր կամ վաղը անպատճառ հը-
րաման պիտի գայ օր «Թաշնանին հա-
մար. քանիցս յաջորդապէս փորձուած
միջոց ժողովուրդի աչքին մօտիւր փը-
ջելու: Արդ առկէ անդին ինչ կրնայի
ընել երբ Պատրիարքարանը անուա-
նում մը կընէ ու կառավարութեան չը
ծանօթացնեն, միւս կողմէս ևս էնթ-
րիկները լայն ասպարէզ գտած են քը-
նացող ժողովուրդի մը մէջ:

Օր, Թաշնանին աչքին Պր. Յակոբ-
եանը հայ չէ եղեր, և իրեն այս հաշ-
ուովը երկու արտաքուստ պոլկարներ

րու տեղ երկու ուրիշ պոլկարներ
պաշտօնի կոչուելուն մէջ ինչ տար-
բերութիւն կայ եղեր... այսպիսի ծի-
ծաղելի խօսքերու պատասխանելու տեղ
ստիպուած եմ կրկին մասնաւորաբար
տեսնել իրականութիւնը, թէ ցայսօր
գաղթած կը մնայ հայ լեզուն մեր
վարժարանին մէջ, հակառակ աղանե-
րու պաշտօնական հերքումին: Եթէ
եղիկեան անուն լուսարարին կամ դը-
պիւրին մի քանի օր աւելի կամ պակաս
ընթերցանութեան դաս տուած լինիլը
այս ցաւալի կացութեան իրեր հերքում
ուղղուի ցոյց տրուի, երանելի միջոցա-
րութիւն: — Երկու երեք օր առաջ
բարեկամ մը հաղորդեց ինձ թէ՝ ծաղ-
կոյի վարժուհիին և այս թրքահայա-
տակ եղիկեանին հրաման եկածէ իրենց
պաշտօնը շարունակելու մինչև դպր.
տարի վերջ, իսկ օր. Թաշնանին հա-
մար ոչ ինչու արդեօք այս մասնաւոր
զլացումը հանելու կը մնայ:

Աւելցնեմ նաև որ հակառակ օրիոր-
դին անձնական նկատումներուն զիս
չհաղորդողը եղած է միայն աղգային
օգուտը և իմ ուղղամտութիւնս պատ-
րաստ եմ միշտ ենթարկելու յատուկ
յանձնաժողովի մը անաչառ քննու-
թեան:

Յօժան Ա. Բ. Մանդակունի

ԱՋԳԱՅԻՆ

Պոլսական թերթերու մէջ ու-
րախոսութեամբ կը կարդանք թէ
խումբ մը հայ դրամատէրներ
վերջնականապէս կազմած են բաժ-
նետիրական անանուն ընկերու-
թիւն մը 10 մ. Առևտրական ըն-
կերութիւն անուան տակ: Հրա-
պարակ հանուած է 20000 բաժ-
նէթուղթ 5 ական ոսկինոց: Տասը
հազար բաժնէթուղթ հիմնադիր-
ները իրենց գնած են: Ընկերու-
թիւնը առ այժմ սեղանաւորական,
առևտրական և ճարտարական
ձեռնարկներով պիտի զբաղի:

— Հանգուցեալ Աւետիք Ղու-
կասեանի աղգին ըրած է միևնու-
թիւ կտակը շնչել տալու համար
ժառանգող դները դատարան դի-
մած են:

— Հ. Բ. Ը. Միութեան ընդհ.

ժողովը տեղի կունենայ Գահիրէի
մէջ նախագահութեամբ Պողոս
փաշա նուպարի:

— Պատր. Տեղապահ Ս. Ը չըջա-
բերական ուղղեց Պոլսոյ եկեղե-
ցիները՝ որպէս զի Կիլիկիոյ նա-
հատակաց տարեգարձին առթիւ
Հիգեհանգստեան պաշտօն կա-
տարուի:

— Տեղապահ Ս. Ը խնդրեց ներ-
քին գործող նախարարէն, որ Սուլ-
թանի գահակալութեան տարե-
գարձին առթիւ ներման արժե-
նանքն Ատանայի բանտարկեալ-
ները:

— Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը ե-
պիսկոպոս ձեռնադրեց Տ. Տ. Նէր-
սէս Դանիէլեան, Խորէն Դիմաքս-
եան և Հրանտ Կարօեան վարդա-
պետները:

— Արմաշի վանքին սեփակա-
նութիւնը եղող անտառին ու մաս
մը հողերուն տիրացած են իսլամ
գաղթականներ: Պատրիարքարա-
նին բողոքին վրայ Բ. Դաշէն
քննիչ զրկուած էր Օսմի Պէյ: Այս
քննիչը փոխանակ տեղւոյն վրայ
քննութիւն կատարելու ու երկու
կողմին հարց ու փորձ ընելու, ի
րեն պարտք համարած է միայն
թիւրք գաղթականներու գիւղե-
րը երթալ և զանոնք քաջալերել
իրենց ոտնձգութեանց մէջ, թե-
լադրելով որ միւս դրացի թիւրք
գիւղերուն հետ համերաշխու-
թեամբ շարժին, վանքին անտա-
ռին ու արտերուն դիւրաւ տիրա-
նալու համար:

— Պոլսոյ Ազգ. Կեդր. վարժա-
րանը վաւերացաւ կառավարու-
թեան իւրեւ բարձրագոյն կըր-
թարան (մէթէպի Իստատի) Հե-
տեապէս կեդրոնականի թէ՝ ու
սուցիչները և թէ ուսանողները
ազատ պիտի մնան զինուորութենէ,
Միւս ազգ. վարժարաններու
վաւերացումն ալ հետզհետէ ձեռք
պիտի բերուի, քանի որ ներկայ
կրթական նախարարը սկզբունքով
կ'ենդունի նոյն վարժարաններու

Պատրիարքարանին իրաւասու-
թեան ներքե գտնուիլ:

— Հանգուցեալ Յարութիւն Պա-
տրիարքի գոյքերէն միայն 1584
գաղչիական և 486 Օսմ. ոսկի
գտնուեց ի. Կաթիլանք կան թէ
երուսաղէմի միաբանութեան դրա-
մաչորդ խմբակը հանգուցելոյն
զառամած վիճակէն օգտուելով,
կարևոր գումարներ կողած ըլլայ
Տէր Յարութիւն Պատրիարք 100
հատ միայն երկաթուղիի արժե-
թույթ ունէր որ ծախուեց է:

— Մեր յարգող բաժանորդներ
էն կը խնդրուի որ հաճին ի-
րենց բաժնէգիրքը զրկել մեզ:

ՆՈՐ ՀՐԱՍՈՒՄԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Հայ յեղափոխական կեանքէ յոյժ հե-
տաքերաշարժ այս վէպին երկրորդ
տպագրութիւնը ամբողջովին ԱՅՍ ՏԵ-
ՍՍԻ ԻՐԱՆՈՒՆԳԻ տպարանէն: Որոնք որ
Ա. մասը ստացած էին, այժմ կրնան
անմիջապէս ստանալ Բ. և Գ. մասերն
ալ խմբագրութենէս: Կանխիկ զրկելով
փոխարժէքը: Ամբողջ երեք մասերուն
գինն է 4 Ֆր. Տասը օրինակ ուղղող-
ներուն 100ին 20 զեղչ:

«ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՎ»

Պօսթօնի «Ազգ» շաբաթաթերթի տը-
պարանէն յոյս տեսաւ վերթօր հիւ-
կոյի իննսուն երեք վէպը յաջորդ
թաղմանութեամբ և մաքուր տպա-
գրութեամբ:

Ստանալու համար դիմել Իրանցի
խմբագրութեան, Դիւնն է 5 Ֆր. կան-
խիկ:

« Ա Ջ Գ »

Շաբաթաթերթ

Ազգային, Գրական և Քաղաքական,
Տարեկան Բաժնեգիրն 13 Ֆր. Դիմել
Rédaction du journal „Azk“
16 Beach St. 4th Floor
BOSTON MASS



ցումները:

2. Գլխաւոր թէ կարելի է արդեօք ասկէ աւելի ըս-
տոյգ ապացոյց գտնել որը տասնեակու անգամ կըրկ-
նուած է: Այս ամենէն վերջ ինչ որ ալ ըսուի գի-
տակից կամ անգիտակից հեռագրացմանը մասին, ոչ
մի նշանակութիւն ունին:

Այն կինը որ ես արձանագրեցի է. Մ. սկզբնա-
տարերով և որուն ուղերգական մասը քիչ վերը
պատմեցի ինծի չորս խոստումներ տուած էր, որոնք
պարտաւոր էր դորձադնել ինձ հրքէք ինձմէ աւելի
առաջ մեռնելու: Իւր կենդանութեանը ատեն երբ ինձ
մէ հեռու գտնուէր, իմ ձեռքի միջոցաւ ինքնաշարժ-
օրէն կը գրէր: Նա խոստացաւ ինծի ամենէն առաջ՝
իւր մահուանէ վերջ ալ ինձ հնարաւորութիւն ունե-
նար ընելու—օգտուիլ իմ ձեռքէս և տեղեկութիւն.
ներ հաղորդել ինձ անդրգրեզմանեան կեանքի դը-
րութեանը մասին: Երկրորդ, պարտաւորութիւն ըս-
տանձնեց իւր ընկերուհիներէն մէկին կամ մի քանի.
սին եւեալ: Երրորդ, պիտի թող տար լուսանակա-
րութիւն: Եւ վերջապէս պարտ էր ունէ մեքիւնի միջո-
ցաւ նամակ ուղարկել ինծի որ վաւերացուած պիտի
ըլլար իւր ստորագրութեամբ բաղկացած չըջանալի
մէջ առնուած խաչէ մը:

է. Մ. գործադրեց այդ չորս խոստումներն ալ:

1. — Նա մի քանի անգամ իմ ձեռքին միջոցաւ
գրեց, անշուշտ երբ յարմար առիթը կը գտնէր այն-
պէս ինչպէս իւր կենդանութեանը:

2. — Երկու անգամ երևաց իմ ծանօթներէս եր-
կու հոգիի որոնցմէ մէկը կին մըն էր: Անգամ մը
նա երևաց ցերեկուայ ճաշի հրաւիրուած հիւրերով
լեցուն սենեակի մը մէջ, ուրկից նա անցաւ առանց
ոչ ոքի տեսնելի ըլլալու. բացի իւր ընկերուհիոյն,
որ յայտարարեց թէ յատկօգէն տեսած է հանգու-
ցեալը: Ուրիշ անգամ նա երևցած է ցօրեկ օրով
փողոցին մէջ, երկու երեք քալ առած և յետոյ
դարձեալ աննետացած է: Ես կրնամ ապացուցանել
թէ այս երևումը այնքան յստակ և որոշ է եղեր որ
ոչ մի կասկած կրնայ մնալ անոր անձնաւորութեանը
մասին:

3. — Իւր մահուանէ վերջ ամենաքիչը տասնեակու
անգամ թող տուաւ լուսանակարութիւն, իւրաքան-
չիւրին մէջ ալ նա անպայման կրնայ ճանչցուիլ:

Այդ կենդանագիրներէն և ոչ մէկն ալ իւր կենդա-
նութեանը պատրաստել տուածներէն արտապաշտած
ըլլալու երևոյթը չ'ունեցաւ:

4. — Ապացոյց կայ պայմանաւորաբար ստորագրու-
թեամբ (չըջանալի մէջ խաչ) խրկած նամակին: Այդ
վաւերացումը ևս ստացայ մի քանի ամիս վերջը
միայն:

Ես այլևս բոլոր յոյսս կորսնցուցած էի. երբ յան-
կարձ մեքիւն մը իւր մի քանի ծանօթներու հետ
նախաճաշի նստած ատեն ինքնաշարժ գրութեան
առաջին փորձի միջոցին ստացաւ հետեւեալ աղբարա-
րութիւնը:

— «Ըսէ Ուրիշամին որ իմ ըրածէս չ'վշտանայ: Ու-
րիշ միջոց չունէի»:

Անկէ վերջը գծուէր է խաչ մը չըջապատուած վա-
րէն բոլորակով մը: Գծագրութիւնը որոշ քալից շատ
կոշտ էր: Ինձմէ զատ ոչ ոք գլխաւոր մեր մէջ կնքը-
ւած պայմանը: Այդ մեքիւնը ես չէի ճանչնար: Եւ
ինչ զարմանալի բան կայ հոս եթէ բոլոր այս փոր-
ձերէն վերջը ես չեմ կասկածիր, այսպէս ասած
մեռելայնեան հետ հաղորդակցելու կարելիութեանը
մասին:

Գ.

Քիչ առաջ կը խօսէի ոգիներու լուսանակարութեան
մասին: Պիտի փութամ ամենէն սկստակի ընթերցողն
իսկ զինաթափ ընել, որովհետեւ ոչինչ չ'կայ այնքան
զիւրիկ որքան լուսանակարներուն ներքեւը և պի-
տի աւելցնեմ թէ անպարար ամենէն աշուրջ և
անհաւատ դիտողն իսկ կրնայ խաբել, Բայց ապա-
կինները որոնք ինքս կը գործածեմ և անոնցմով ինքս
կը պատրաստեմ լուսանակարները խաղախութեան
դէմ տեսակ մը երաշխաւորութիւն մը կը ներկայա-
ցնեն: Բայց եթէ ես կը հաւատամ այդօրինակ լու-
սանակարներու ստուգութեանը, առիկայ անշուշտ
չատ մը համոզիչ փաստերու վրայ ինչեղով է: Ոգի-
ներէ հանուած լուսանակարին ինքնատիպ ըլլալուն
անհերքելի ապացոյցը կը կայանայ ամենէն առաջ
հանգուցելոյն դէմքին կատարեալ նմանութեամբ
ստացուած ըլլալուն մէջ, առանց սակայն այդպիսի
անձնաւորութեան մը գոյութիւնը լուսանակարիչը
գիտնալու և լուսանակարիւն պահուն սրահին մէջ
առանց արտաքին բան մը նշմարուելու:

(Շարունակելի)

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԻԻԱ

Արնավուտը գտա ըսեան տէրամ
ի թմէքաէ տիր Պազը մէնպալա-
րա հազարէն, ասըլարըն մըզտա-
րը կիւն պէկիւն արթմազտա ը-
մը, Թագաթ Շըգոտրա ճիվարըն-
տա պուլընան ասըլարըն օսման-
ը ասքէրի թարաֆընտան տէֆ
ութէպիտ օլունտըլարընը վէ
Գասթուրիա վէ թուզ թարաֆիա-
րընտա ասիւի ասքէրին ասըլարա
գարըն մուվաֆագիյէթլէ իլէրլէ-
տիկինի թէլէկրաֆլէր պիւտիւր
միշ տիր:

—Արնավուտ ը եանը ընչիւն-
րինտէն պազըլարընըն Սօֆիայա
կէլուպ, Մաքթիւնիա գօմթիւնի
իլէ իսթիշարէտէ պուլընտըլա-
րընա տալիւ չըգմըշ օլուն շայէտ
նթունպուրտա Պուլկարիայա գարըն
էմիյէթիպիլիք հասըլ իթմիշ օլ-
տըլընըն էվրազը հալաւտիս եազա-
րազ, Մաքթիւնիա տալիս եէ-
նի պիր ըսեան զուհուրի ինթի-
մալընա գարըն՝ անէլէթէն թէ-
տարիգաթը ասքէրիյէյէ պաշ-
լանըլմաւընըն իզթիզաւընը կէօս
թէրիյուրաւ Գէզա Աստորիա վէ
Պուլկարիա պէյնիտէ շու սըրա
տօթըլը արթմաւընա վէ Թրաշ
Եօղէթ իմքէրաթօրըն Զար Թէր-
տինանտա նիշան վէրմէսինէ
թիւրքլէր շիւթէն իլէ պազմազ-
տա տըրլար. Տիկեր թարաֆտան
տալիս ըսեանտա պուլընան կաթօ
իկ Արնավուտընըն թէլիիգ-
նօթի մէստորիա օլտըլընա տալիս
շիւթէյէր կէօսթէրիյուր:

Առնավուտընըն հազար նամ ին-
կիլիկ կազէթասը չէօլլէ եազիյուր
«Արնավուտընըն թիւրքլէր ի-
շիւն միւշիւրաթ բէք պէօլիկ
տիր, պիրա Ենմէնին աշվալը ա-
ղըրաշմազտա տըր Օսմանլի իս-
թիւլընտան պէրու թիւրքիա-
նըն հալը պու տէթէնէ թէլիլքէ-
լի օլմամըն ջաղ, Ասըլարըն
Ենմէնիյէթլի պիր մուվաֆագի-
յէթ ինթիմալ տըր քի՝
Մաքթիւնիա տալիս պիր րս-
եան հուսուլա կէթիւրսին:

—Ենմէնին սէր գօմանտանը
իզլէթ բաշանըն Պապը Սէրա-
քէթէ վէրտիկի օսն պիր թէլէ-
կրաֆա պինտէն, Ենմէնտէքի Օս-
մաթըն ասաքիրի հէր նօթթատա
քէօպի մուվաֆագիյէթ իթմիշ
ասքէրին Ենթիշտիկի Ենթիշտէ
արապ չէյիլէրի վէ գապիլէլէրի
իթաթ կէօսթէրիլէր իթմիշ:

Իմամ Ենմէն համարալա չէքի-
միշ:

Տ Ա Ի Ի Լ Ի Յ Է

Զար հազարէթլէրի Թիլիպէտէ
պուլընուպ, կէչէն կիւն Պաշգոյօ
մանաթըրընա աղիմէթ իթմիշ
տիր:

—Զար ֆամիլիաւը Բասկաւա

Եօրթուլարընը Բիւլա մա-
նաթըրընտա կէչիլէնէթլէրի
Սօֆիա կազէթալարըն եազիյուր:

—Պու հաթթա չէհրիմիլէ թէչ-
րիֆ պուլընուպ օլուն տալիլիլ
նազըրը Մ. Լոսյգոնով Բասկալի
այի Բիլէվնատա կէչիլմէք իլէ-
թինտէ իտի:

—Սապըզ վիլէլա ընչիւն Մ.
Մալինովըն Զար հազարէթլէրի
գապինէ նամը իլէ վէրմիշ օլտը
ղը իսթիֆ անամէսինին միւնտէ-
րէնաթը եալընըլ քէնտիսի թա-
րաֆընտան եաղըլմըշ շտըլըն-
տան տիկէր միւնտէթլէր մէզ-
քիւր իսթիֆան սէնին միւնտէ-
րէնաթընա վազլի պուլընուպ
լարընը Սօֆիա կազէթալարըն եա-
զիյուր:

—Ենմէնի թալիս օլունաճազ օ-
լան նաշարնիլէրին (գալմազաւ)
թալիլէրին տալիւ չըգաճազ
օլան իրատէ պէլէնիլիլ:

—Սօֆիատան Մաքթիւնիայա
չէթալար կէօնտէրիլիլին տա-
լիւ չըգմըշ օլուն շայէթ իլզէ-
րինէ՝ հէլքիւմէթ Սօֆիատա պու
լունան Մաքթիւնիալարըն չօգ-
լարընը թէվզըֆա մէնպուր օլ-
մուշ, սօնրո մէսլէն եալան օլտը-
ղը մէյտանա չըգմըշ վէ թէվ-
զըֆ սէրպէսթիլ ըրազըլմըշ օլան
լար տըր:

—Մէարիֆ նէզարէթի Գէօս,
տէնտիլաւէքի բէտալիլ (Մանկա-
վարժական) մէքթէպի օսն սընըթ
թալէպէլէրի Բուսնիւրալ զ'յա
րէթ իթմէլէրին մէնն իթմիշ
տիր:

—Զար հազարէթլէրին ընս
մէն վիլէնիւրա զիյարէթլէրի ի-
շիւն Սօֆիա վէ վիլէնիւրա տարաւ-
տա միւշէթէրաթ պաշլամըշ տըր:

—Ենմէնի հիւքիւմէթին իլք իշի՝
պուլընտան սօնրա Սինօրտան պիր
թէք չէթա թիւրքիայա կէչիլէ-
սի իշիւն էմիլլէր վէրմիշ օլմաւը
օլտըլընը Սօֆիա կազէթալարըն
եազիյուր:

ՏԵՃԵԹԼԻ ՊԻՐ ՖԱՃԵԱ

Մեակ կազէթասընտա օգուտը
իզլէ, Սթանպուլու Սկիւտար ճէնէ-
թինտէ բէք տէշէթլի պիր ֆաճէա վու-
զու պուլմուշ, Ենմէն ասապազ Սաթա-
զամ Թէրիտ բաշանըն սէլֆիլիլինտէ
մարտ 13տէ պիւթիւն խանէ իւշաղը,
18 թիլի էօլիլ պուլընումուշ, Զապ-
թիէ գօմիսէրի համալ պէյին տէր հալ
իւրա իթիլիլ թաֆագաթ վէ թէնէսիւ
սաթտան անշաղըմը քի՝ Թէրիտ բաշա
վէ քէնտի Օսման նամ մախտուր իս-
թիպտաթ թարաֆտարը պուլընտըլա-
րընտանտըլը՝ բաշանըն տիկէր մախ-
տուր Ենմէն Թէօն թիւրքլէրտէն
օլուպ, պիւտտէրիւտէն ինթիգամ ալ-
մազ իշիւն, պիր կիճէ թիւթիւ (ասի-
ալան խնկաճիւթիւն) վաթիմաթ իլէ
պիւթիւն խանէ իւշաղըն պալըթտը-
մըշ ֆաղաթ Օսման գաղուպ սէլֆիլի-
նին գըրաթթիւնէսինէ սազմանըր,
Ենմէն Թէ իլք տէֆտա տիկէր պա

ղըլանլարըն պօղաղլարըն պիրէր պի-
րէր պըշալէ քէստիկալէն սօնրա, կիւ-
տէր գարտաղընըն սաղանտըլը օտա-
յա, ֆաղաթ օրատա քէնտիսի աէ գար-
տաղը իլէ պէրապլէր էօլիլ տի չէր:

Ա Յ Դ

Վարձակալ կ'ուզուի Հայկական Ըն-
թերցարանի սրճապետութիւնը ըստանձ
նելու համար: Փափաքողք թող դիմեն
Ընթերցարանի Վարչութեան և կամ
արդի վարձակալ տիրա Բրշակի:

Հայկական Ընթերցարանի
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն Մ Ը

Ի Վ Ա Ռ Ն Ա

Նախկին սպայ Տ. Սարգիս Գրիգորեան
Եւրոպական համալսարանի մը մէջ ի-
րաւագիտութեան նեւեաճ և չրջանա-
ւարտի վկայականը ստանալէ իտոյ Ե.
կաթ է իբր փաստաբան հաստատուիլ
քաղաքիս մէջ, Շումէնքա փողոց,
քաղաքապետութեան շէնքին ետեւի
կողմը:

Դատական գործոց մէջ ազգակցի մը
պաշտպանութեան առաւելութիւնները
ճանչցող ազգայինք թող դիմեն իրեն
ս. Կոն. պիտի մնան:

Ն Ո Ւ Ո Ւ Բ Ե Ր - Ա Ր Ե Ի

Ազգային և Բաղաւախան
կը հրատարակուի Երեւանի, Հինգ-
բաքի և Շաբաթ օրերը: Տարեկան
բաժնեդին 15 ֆր. Դրամ, Rédaction
du journal "LOUSSAPER-AREV"
Le CAIRE (Egypte)

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք» ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ

Հետեւեալ գիրքերը:

- ՀԱՐԻՊ ԱԽՊԵՐ գին 1 ֆր
- ԱԶԱՏ ԵՐԿԱՐԱՆ » 1 »
- ԹԻԱՊԱՏ Ա. հատոր » 1 20 »
- ԽԻԱՊԱՏ Բ. » 2 80 »
- ԿԱՐՄԻՐ ԵՄՄԱՐԻՅ » 1 »
- ՊՈ. ԼԿԱՐԱՅ ՊԱՏՄ. 50 »
- ԻՐԱԽՈՒՆԻԻ հաւաքածոյ մէկ
տարուանը 12 ֆր.

Սոյն գիրքերէն ստանալու հա-
մար պէտքէ արժէքը կանխիկ
զրկել:

Առնուազն տասր օրինակ գնո-
ցին 20 առ 100 զեղի կ'ըլլայ:

ԹԻԻՐԻԻԱ

ԶԱԽԻՐԷ		
ՊԱՆԴՏՈՅ		
Վալիս 100 ֆր	13.90/17.50	
Արապա 5 շիւրիկ	11.69	
ԱՐԲԱ		
Վալիս 100 ֆր	12.	
Արապա 5 շիւրիկ	7.16	
ԵՌՈՒԱՅ Վալիս	10.25	
» արապա	5.06	
ԶԱՎՏԱՐ 100	11.50	
» Արապա	7.	
ՅԱՍՈՒԼԻԱ 100 ֆր	24.75	
ՏԱՐԸ 5 շիւրիկ	9.40	
ՄԻՍԻՐ 100 ֆր	11.55	
» արապա	8.19	
ՅԻԹ 5 շիւրիկ	10.60	

ՊԱՐԱԼԻԷ

Վառնա թիւագործտա պաղգալիլէ մալ
լէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթըն ֆի-
րանք իլէ:

ԳԱՀԼԷ	2.65/2.75
ՇԵԲԵՐ Գէլէթ քէլլէ	88.
ՇԵԲԵՐ քէլլէ սանաթ	45.
ԹԻՐԻՆՆ ճէնօվա չուվալը	45.50
» Ինիլիլիլ	32.50
» Բիլլիլ	53.
» Յիլիլիլ	44.
ԿԱԶ Պաթմա Սանըլը	9.40
» Թրալա՝ 1 թէնէթէ	4.
ՉԵԹԻՆ ԵԱՂԸ քիլ	1.80/2.10
ԳՈՒՐՈՒ իւ վիւմ	85/90
ԽՈՒՐՄԱ	40.47
ԹՈՒ 2 Թուանա չուվալ	12. 20
ԹՈՒ 2 Յօղա »	13.50
Ենմէնթա	5.

Տ Ի Մ Ե Ր Մ Ա Ր Ի Ն Ո Վ

ԲՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՃԱԻ

Ս. Զակի առիւ պատաստուած ու
բերուած ընթերցանութեան ամիս
սեակը, անուեալ հաւիլք և ալի
կը ծախի խիստ աճան գինով:

խաղանօք
ՊԱՅ-ՏԻՄԻՐ

Մ Շ Ա Կ

Բաղաւախան և Բաղաւախ Օրաթեր-
37 տարուան) բաժանորդագրին է
տարին 30 ֆր. 120 զր. - Դրամ
Redaction du journal "MSCHAK"
TIFLIS (Caucase)

Издатель: X Кургелан
Հայրան «Իրաւունք» Վառնա

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՐԻՈՒՆԷՐ»

ԿԸ ՏՊԱՐԱՆԻ ՄԱԳՈՒՐ ԵՒ ԶԱԳՈՒՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՄԵՆ ՏԵՄԱՆ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան Հրահրագիր, Այցատու, Նամակագրութիւն, Պահարան
Պատասխանակ, Հաւուեթուրքիւ և ուրիշ գործեր

Հայերէն, Պաշտօնընթաց, Պատմութիւն և Իրաւունքներ

Մեզ դիմողներու ճաշակին գոյապաւ յաջող համար Տպարանս նոր
բերել տուած է ամենապիւրիւն փաստեր
գործիքներ և տուած

ԾԱՆՁԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԽԱՎԱՃԱՐՈՎ ՄԸ